

ազգի համար փորձերի հետեանքն, աւելի համողիչ փաստ է. աւուտի և մեր Հայ վաճառականներն և գործարանատէրերը պէտք է աւելի ուշք դարձնեն եւրոպայի աւելի մեծ առեւտրական կենդրոնների վերայ և նոցա օրինակին հետեւեն: Միւս կողմից հայ ազգը կրօնական ազգ է, նորա բոլոր գոյութիւնը եկեղեցիով է, որոյ կանոնները պահանջում են սուրբ պահել կիրակին և տօն օրերը: Եկեղեցու այս պահանջից շեղվելով Հայը շեղվում է իւր գոյութեան ճանապարհից—ուրեմն դէպի իւր վնասն է գնում: Ցարակոյս չկայ, որ Հայ վաճառականը կիրակի օրը իւր խանութը փակելով և իրան ու իւր գործակատարներին միջոց տալով բարոյական և կրօնական զբաղմունքներով կազդուրելու իրանց սիրտն ու հոգին, աւելի վաստակած կլինէին, քան այն մի քանի կոպէկներն, որոնք նոքա կիրակի օրուան առուտուրով ձեռք պիտի բերեն ի վնաս թէ իրանց և թէ իրանց գործակատարների բարոյական և կրօնական զգացմանց: Երկիւղած և բարեկիրթ գործակատարն աւելի հաւատարիմ կլինի և աւելի օգուտ կտայ իւր տիրոջ վեց օրում. քան անհաւատարիմը բանելով շաբաթուան և եօթներորդ օրը: Յայտնի բան է այդ վնասակար դիրքը հետեանք է ներկային նիւթապաշտութեան, որ ստիպում է մարդուս մոռանալ իւր գլխաւոր հոգեւոր մասը, միայն մարմնոյն հոգացողութեամբ նորան զբաղեցնելով: Պէտք է յիշենք միշտ սուրբ Գրքի խօսքերը թէ «ոչ հացիւ միայն կեցցէ մարդ»:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՎԵՐԱԾՆԴԻՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Շարահանդեսներ)

1796 թուին պարսկական պատերազմից յառաջ գլխաւոր հրամանատար կոմս Զուբովի անուանով գրուած հրովարտակում (рескриптъ) ասուած է, թէ Ռուսաստանը զէնք է բարձրա-

ցնում հնադարեան քրիստոնեայ Հայ և Վրաց թագաւորութիւնների ազատութեան համար: Բայց, ինչպէս յայտնի է, այս փառաւոր պատերազմը նոյնպէս անյաջող վախճան ունեցաւ: Պաւլոս կայսրը անակընկալ կիրպիւլ յետ կոչեց իւր զօրքերը և Եկատարինէի բոլոր ծրագրերը, որոնք այս ձեռնարկութեան հիմնընդներն էին կազմում, միանգամից հող ու միսիր կրտչրուեցան: Ռուսաց զօրքը նորից բարձի թողի արեց Անդրրկովկասը և այս անգամ այս երկիրն Աղայ Մահմատ խանի բարարոտութեանցն ուղղակի զոհ սնելու համար: Անկարծիք Լանգթամուրեան ոչ մի աւերածութիւնները չէին կարող հաւասարուել այն սարսափելի արիւնհեղութիւններին, որ աղայ Մահմադ Նահը պատրաստում էր Հայաստանի գլխին թափելու, եթէ մարդասպանի սուրը 1797 թուի ամառը վերջ չըզնէր նորա արիւնածարաւ մտադրութիւններին:

Բայց, ինչպէս մօտիկ անցեալի փաստերը ցոյց են տալիս, երեք չորս տարի անցնելուց յետոյ այսպիսի վսեմ և դժուարաւուծելի խնդրի կէսն ինքն ըստ ինքեան ի գլուխ եկաւ—Վրաց թագաւորութիւնը Գեօրգի թագաւորի մահից յետոյ միացաւ Ռուսաստանի հետ:

Այս հանգամանքը մօտեցրեց Հայաստանի ազատութիւնը, բայց միայն արմատից փոփոխութեան ենթարկելով նախկին ծրագրերները: Այժմ ռուսաց իշխանութեան տակ մի աւատական ինքնուրոյն թագաւորութիւն հաստատել և այն ռուսաստանին միացած Վրաստանին սահմանակից, այդ մասին մտածելն անգամ աւելորդ էր:

Բուն Վրաստանում ռուսաստանի հետ միանալու ժամանակը Հայերի թիւը համեմատաբար մեծ չէր, բայց յետոյ սկսեց արագապէս աճել և բազմանալ:

Իշխան Յիցիանովի օրովը, չրնայելով որ այս նշանաւոր անձնաւորութիւնը մի առանձին մեծ ատելութիւն էր զգում դէպի Հայերը, նրանցից հազարաւորները գալթեցին Վրաստան և ընդունեցին ռուսաց հպատակութիւն:

Պարսիկների հալածանքներից հարիւրաւոր հայեր փախչում էին պարսից սահմանակից խանութիւններից, կորստի մատնելով բոլոր իւրեանց կարողութիւնն և սեպհականութիւնը:

Զրկուած գոլով ամենատեսակ նիւթական օգնութիւնից՝ նո-

քա, որպէս և իցէ, պատսպարանք էին գտնոււմ, ի հնուց յըրաստանոււմ բնակուած համազգիների մօտ, բնակութիւններ էին հաստատոււմ ամայի աւերակներոււմ և մինչև ստրուկ ևս գրուոււմ էին:

Յրտից, սովից, մահատանջ տենդից հարիւրներով էին մեռնոււմ, իսկ 1804—1805 թուերի ժանտախտն խեղճ թշուառների քառորդ մասն էլ չըթողեց: Բայց և այնպէս Հայերը բնակութիւն հաստատեցին Թելաւի, Սղնախի, Բօրչալոււի և Լօսուու գաւառների այն տեղերոււմը, որոնք զուրկ էին խալաղ երկրագործ և աշխատասէր ձեռքերից:

Պարապիւով հողագործութեամբ՝ միաժամանակ նոյն Հայերը առաջնորդոււմ էին ռուսաց զօրքին, մատնութիւնների և իւրառովութիւնների առաջն էին առնոււմ, թշնամու բանակից տեղեկութիւններ էին բերոււմ, պաշար էին հայթայթոււմ և կարեւոր ժամանակը քաջաբար կռուոււմ էին ռուս զօրքի հետ միասին նոցա թուոււմը:

Յիցիանովի և Գուղովիչի Գանձակի և Նրեանի դէմ մղած պատերազմներոււմ Յովհաննէս Արքեպիսկոպոսը և Ներսէս վարդապետը ժողովեցին հայ զինուորախոււմը 1500 մարդից կազմուած և իւրեանք գլուխ կանգնեցան սպառազինութեանը:

Հայերը շարունակ գտնուոււմ էին յառաջապահ գնտի մէջ, նոքա էին, որ յարձակոււմն արին Գանձակի վերայ և 1304 թոււի, յունիսի 20 ի նշանաւոր պատերազմոււմը, երբ Յիցիանովը ջարդեց պարսից բանակը, նոքա մեծ կորուստ ունեցան: Կարեւորքինը, Կատլեարեակին և մինչև անգամ ինքը Յիցիանովը, որ ինչպէս ասացինք, շատ ատելութեամբ էր վերաբերուոււմ դէպի Հայերը, միաձայն վկայոււմ են՝ իւրեանց օրով Հայոց կատարած մեծամեծ յալթութիւնների մասին:

Ամենից նշանաւորն այն էր, որ ռուսները Հայերի մէջ գտան իւրեանց համար յուսալի բարեկամներ, որոց վերայ կարելի էր վստահ լինիլ:

Բախչեվը գրոււմ էր, որ «Կախեթայի խռովարար ապստամբութիւնների ժամանակ, հայ ազգը, որ Վրաստանի մորդաբնակութեան նշանաւոր մասն է կազմոււմ, անյողողող մնաց հաւատարմութեան մէջ և զոհելով իւր կարողութիւնը՝ մինչև կեանքն ևս, կռուեց ապստամբների դէմ և բաղմիցս ապացու-

ցեց իւր քաջութիւնն ու անկեղծ անձնու իրութիւնը։

Ալէքսանդր կայսրը բարձրագոյն հրովարտակով 15 ին սեպտեմբերի, 1813 թուի պատասխանեց վերոյիշեալ յայտարարութեանը հետեւեալ խօսքերով. «Վրաստանում բնակուած բոլոր իմ սիրելի և հաւատարիմ հպատակ հայ ազգին»։ «Հայ ժողովուրդն իւր բոլոր դասակարգերով (ասուած է այն հրովարտակի մէջ) բազմադիմի հանգամանքներում և հաստատուն հաւատարմութեան ամեն դէպքերում ապացուցեց իւր անկեղծ անձնու իրութեան և գոհունակութեան զգացմունքը, և երբ թեթեւամտութիւնը և չարանպատակ անհաւատարմութիւնը աշխատում էին ամենուրեք խախտել Վրաստանի մէջ մեր թագաւորեցրած խաղաղութիւնը, Հայերը գերազանց հանդիսացան իւրեանց օրինակելի տոկունութեամբը և հաւատարմութեամբը. այն խառնաշփոթ հանգամանքների մէջ նոքա հաստատուն և ամուր եռանդ ցոյց տուին դէպի մեզ և մեր գահը, զոհելով յօգուտ մեր կառավարութեան և հասարակաց բարօրութեան, ոչ միայն կայք ու կալուածքները, այլ և իրանց կեանքը։ Թո՛ղ անմոռաց մնայ ապագայից յիշողութեան մէջ այս վկայութիւնը ի պատիւ և ի փառս նոցա։»

Բտիշչեվը կարեւոր դատեց, որ բարձրագոյն բարեհաճութեան այս առանձին նշանը, որ պէտք է յազգէ սոց. անջինջ մնայ Հայ ազգի սրտում՝ իբրև ապացոյց անձնու իրութեան առ Ռուսաց գահն, մեծահոգի կերպիւր յայտնուէր ազգին։ Եւ ահա, նոյն թուի, նոյեմբերի 22 ին Հայոց բոլոր նշանաւոր իշխանները և պատուելի քաղաքացիքը հրաւիրուեցան գլխաւոր հրամանատարի տունը։ Բարձրագոյն հրովարտակը գրած էր այն տեղ կերպասեայ թանգագին բարձի վերայ։ Չորս հայ աւագ իշխաններ և երկու նշանաւոր քաղաքացիք վերցրին հրովարտակը և փառաւոր հանդիսակատարութիւնով յառաջ գնացին գէպի Վանքի մայր եկեղեցին։ Խուռն բազմութիւնը լցուած մերձակայ փողոցները, ուղեկցում էր հանդիսին։ Բտիշչեվը ամբողջ զինուորական և քաղաքական ծառայողների հետ անբաժան ընթանում էր։ Բարձրագոյն հրովարտակն երեւելուն պէս՝ զօրքը զինուորական պատիւ տուեց։ Մինաս Արքեպիսկոպոսը՝ բոլոր հոգեւորականութեան հետ զգեստաւորուած՝ վանքի գրանը խաչով, իրազլառով դիմաւորեց հանդիսին։ Նա իւր ձեռքն ա-

ուսւ բարձրագոյն հրովարտակն և գլխին դրած՝ շարականներով, զանգակահարութիւնով և ժողովրդի գոհացողական փառաբանութիւններով յառաջ շարժուեց գէպի եկեղեցին: Տաճարի դրանը տեղւոյն հոգեւոր պետը Աստուածատուր արքեպիսկոպոսը իւր բարձր կոչման համապատշաճ ամենայն փառքով զարգարուած՝ սպասում էր թափօրին: Ընդունելով բարձրագոյն հրովարտակը նա ինքն ևս դրեց գլխին և մտաւ եկեղեցին: Սեզանի առաջին արհին ծունկ չոքեց, հրովարտակը բազմացրեց նորա համար պատրաստած տեղը, ժամը օրհնեց և գոհացողական մտղթանքն սկսաւ:

«Այն ջերմ փառաբանութիւնները և սրտաբուղիս արտասուքները, որ արտայայտուում էին ամէն դասակարգի հայ մարդի երեսի վերայ, գրում է Բոիշչելը՝ նոցա խօրին և անկեղծ զգացմանց և առ կայսրն ունեցած ջերմ գոհունակութեանց թարգմանն էին:»

Երեկոյն Հայերը մի շքեղ երեկոյթ տուին և հէնց այնտեղ նուիրեցին 4000 մանէթ չքաւորներին բաժանելու համար: որպէս զի և նոքա մասնակից լինին հասարակաց ուրախութեանը: Հրովարտակը բերող սուրհանդակը 1000 մանէթ պարգև ստացու հայ հասարակութիւնից:

Ռուսաց կայսեր մի բարեհաճ խօսքի համար հայ ազգի զգացած այս սրտալիր ուրախութիւնը պարզ ապացոյց է, թէ ի՞նչպէս մեծ ջանքով ճգնում էին նոքա ազատուել օտարազգի անհաւատների իշխանութեան տակից, թէ որ աստիճան ձգտումն ունէին նոքա դէպի հիւսիսային հզօր պետութիւնը և թէ որչափ բնական և օրինաւոր էր ուրեմն ռուսաց հետամուտութիւնը դէպի Անգրիկովկասի քրիստոնեայ երկիրները:

Տարիներ անցան, բայց դեռ չէր հասել անհաւատների ձեռքից հայ ազգի, և նորա սրբութիւնների ազատութեան օրը, դեռ չէր զարկել հալածանքներից լոյս հաւատի փրկութեան ժամը:

Բայց և այնպէս բուն Հայաստանումը ազատութիւն ձեռք բերելու գաղափարը մեռած չէր, այն էլ՝ ռուսաց օգնութեան շնորհիւ:

Մի ժամանակ Հայոց սուրբ հայրերից մէկը նախագուշակել էր թէ Հայաստանը ազատուելու է հիւսիսային ազգի ձեռքով: Հայերը հոգւոյ ամենայն զօրութիւնով հաւատում էին այս

աւանդութեանը, նոցա սրտի խորքում այնպէս արմատ էր ձգել այդ խօսքը, որ հայրը մեռնելու ժամանակ կտակում էր իւր զաւակներին զանգակահարութիւնով տօնել այն օրը, երբ կրծագի Հայաստանի ազատութեան արշալոյսը, որպէս զի ինրն էլ գերեզմանի մէջ՝ այս անցաւոր կեանքի սահմանից դուրս՝ լսելով այս աւետիքը, խնդայ հայրենեաց փրկութեան համար: Այս բերկրալից դէպքին հայերը առանձին իմն եռանդով և յուսով էին սպասում:

Կէ ահա 1827 թուի Պարսկական պատերազմն սկսած ժամանակ Պարսից աշխարհի հայերը գրկաբաց ուրախութեամբ դիմաւորում էին ռուսներին, ինչպէս իւրեանց ազատարարներին:

Այդ ժամանակուան ազգային ձգտումների թարգմանը և ղեկավարը հանդիսանում է Ներսէս Արքեպիսկոպոսը, մի վըսեմ եռանդով լցուած անձնաւորութիւն, որ կարծես իւր ամբողջ կեանքովը նախապատրաստուած էր ուղղակի այդ հերոսական քաջագործութեանց համար:

Ներսէս Աշտարակ գիւղի մի քահանայի որդի էր: Ի մանկութենէ նա իրեն նուիրել էր միայնակեցութեան: Ամենայն ուրեք անբաժան գտնուելով իւր հօլանաւոր Դանիէլ արքեպիսկոպոսից՝ նա ձեռք բերեց այն բաղմափորձութիւնը, այն մարդաճանաչութիւնը, կեանքի և հանգամանքների մէջ այն հմտութիւնը, որոնք վերջումն այնպէս պէտք եղան իրեն:

Վարդապետ ժամանակը 1799 թուին նա Դանիէլի հետ գնաց Կ. Պօլիս, նա ծանօթացաւ այն տեղ տաճկական մայրաքաղաքի նշանաւոր հայերի հետ, սկանատես եղաւ Յովհաննէս պատրիարքի անկմանն և աքսորուելուն և նորա փոխարէն Դանիէլի պատրիարքանալուն, վերջը՝ տասն ամսից յետոյ՝ տեսնելով Դանիէլի գահընկէցութիւնը, ինքն ևս նորա հետ աքսորուեց Թոխաթ:

Հէնց այս ժամանակ մեռաւ Էջմիածնի կաթողիկոս Յովսէփ երկայնաբազուկ Արղութեանը և Դանիէլը հռչակուեցաւ նորա փոխարէն Հայոց կաթողիկոս:

Դանիէլն և Ներսէսը աճապարեցին Էջմիածին, բայց գեռ ճանապարհին—Բացազիդումը իմացան, որ Դաւիթն Էջմիածնումն իրեն կաթողիկոս է հրատարակել և Սուլթանից և Նահից հաստատուել, որպէս թէ հանգուցեալ կաթողիկոսի կը-

տակին համաձայն, որ ի հարկէ, վերջումն երեւցաւ, որ կեղծ էր:

Դանիէլը մնաց Բայազիդից ոչ հեռու Ուլքիլիսայի փոքրիկ վանքումը, և ահա այս ըոպէից սկսուում է հայոց եկեղեցական պատմութեան մէջ յայտնի կաթողիկոսական գահի համար կռիւր: Ռուսաստանը, թէև սկզբումը պաշտպանեց Դաւթի իրաւունքը, բայց վերջը ստուգելով հանգուցեալ կաթողիկոսի կողմի կեղծումն, անցաւ Դանիէլի կողմը: Ինչպէս ասում են, Երեւանի սարգարը կաշառուած լինելով տասն երկու քսակ ոսկելով, միջամտեց այս շփոթին և Դանիէլը Ներսէսի հետ շլթայակապ բերուեց էջմիածին և բանտարկուեցաւ:

Ներսէսին յաջողեցաւ փախչել Վրաստան ճիշտ այն ժամանակն, երբ Դանիէլին քարտեղին Մարաղայ: Շատ չանցաւ, Պարսից կառավարութիւնը ռուսաստանի սպառնալեօքն ինքը գահընկէց արեց Դաւթին և կաթողիկոսութիւնն անցաւ Դանիէլի ձեռքը: Ներսէսն այդ միջոցումն եկաւ էջմիածին և եպիսկոպոս ձեռնադրուեց:

Առաւել մեծ ազդեցութիւն ձեռք բերեց Ներսէսը Դանիէլի յաջորդ Եփրեմ կաթողիկոսի օրովը: Բայց որովհետև պարսից տէրութիւնը հալածում էր Ներսիսին, նա 1814 թուին թողեց էջմիածինն և նշանակուեցաւ Վրաստանի առաջնորդ, ուր և գրաւեց Երմուզլի համակրութիւնը: Բայց քաղաքական հանգամանքներն այնպէս խճճուեցան, որ ինքը կաթողիկոսը ստիպուեցաւ փախչել էջմիածնից և ապաստանել Վրաստանումը՝ Ներսիսի վիճակումը: Նոքա միմեանց հանդիպեցան Շուշումը:

Ծերունի Եփրեմ կաթողիկոսը ինքը նստեց մի վանքում և աթոռի բարձրագոյն վարչութիւնը նորից յանձնեց Ներսիսին:

Աբբաս միրզան գիտելով որ Ներսէսը մեծ ազդեցութիւն ունի բոլոր հայերի վերայ, շատ անհանգիստ էր, որ նա իւր իշխանութիւնից դուրս է ապրում, ուստի ամենայն զօրութեամբ, փողով և պատիւներով աշխատում էր համոզել նորան կաթողիկոսի հետ միասին գալ էջմիածին: Էջմիածնի միաբանները Աբբաս միրզայի ճնշման ներքոյ լինելով, նորա հրապուրանօքը պահանջում էին Եփրեմ կաթողիկոսի վերագարձը: Սակայն Ներսէսը կամելով ազատ լինիլ պարսկական

իշխանութիւնից, մնաց Վրաստանումը և կաթուղիկոսին էլ համոզեց մնալ:

Պէտք է ասել, որ Ներսէսը յոյս ունէր մօտիկ ապագայում իւր հայրենիքի ազատութիւնը անձամբ տեսնելու և ինքն էլ ճոյն ուղղութեամբ էր գործում: Ներսէսը ջերմ հայրենասէր էր, նա իւր հօրիցն էր դաստիարակուել այդ ուղղութեամբ: Վերջերում նա արտասուքն աչքերին պատմում էր, թէ իւր հանգուցեալ հօր վերջին կտակն այն է եղել, որ մինչև Հայ աղբի սրտագին ցանկութիւնը չըկատարուի և սուրբ կրօնը մոչմետականութեան լծից չազատուի, նա իւր գերեզմանին այցելութիւն չըգայ: Ասում էր Ներսէսը, թէ ինքն ապրում է այն յուսով, որ Ռուսաց զօրապետի հետ միասին այցելէ մի օր իւր հօր գերեզմանին:

Եւ ահա, երբ 1827 թուին ռուսաց յառաջապահ զօրքը Բենկենդօրֆի հրամանատարութեան ներքոյ ոտք դրեց Երևանի խանութիւնը, նոցա մէջ էր և Ներսէսը:

Քրիստոնէից ազատութեան համար եկած զօրքի մէջ Ներսիսի ներկայութիւնը քաջալերում էր Հայոց ազգաբնակչութիւնը:

Պատերազմի ամբողջ շարունակութեան ժամանակ Ներսէս էջմիածնում նստած, սրտատրոփ հետեւում էր պատերազմական ընթացքին: Նա ականատես էր Աբբաս Միրզայի արշաւանքներին որ մեծ վտանգ էր սպառնում էջմիածնին, ներկայ էր Աշտարակի կռուումը, տեսաւ Թաւրիյի և Երևանի անկումը և խաղաղութեան դաշնագրութիւնը:

Այն ըոպէին, երբ նա աներկբայ կատարուած էր համարում իւր հայրենիքի ազատութեան գործը, նա պարտք համարեց կատարել իւր հօր կտակը: Աշտարակ անշուք գիւղից կէս ասպարիզաչափ հեռու գտնուում էր Շահազիզեան Կամարականների առանձնացած սեպհական գերեզմանատունը*): Այդ տեղ բերեց Ներսէսը գեներալ Կրասովսկուն և ծնկաչոք արտասուքն աչքերին խոնարհեցաւ հօր գերեզմանի առաջ, որին երկար տարիներ չէր վստահանում մօտենալ:

(*) Ներսիսի հայրը Թաղուած է ոչ Շահազիզեանների գերեզմանատանը, այլ հասարակաց:

նասիրական զգացմունք և ազատութեան ձգտումն: Այդպէս էլ եղաւ:

Երբ ռուսաց զօրքը Թաւրէզն առաւ, անմիջապէս Ադիրբէյջանի հայերի կողմից պատգամաւորութիւններ յաճախեցին Պասկեհի մօտ և խնդրեցին գաղթեցնել իրենց ռուսաց սահմանը:

Ռուսաց կառավարութեան ցանկութիւնն էլ այս էր, այս առաջարկութիւնը բոլորովին համաձայն էր նորա հայեցակէտին: Գլխաւոր հրամանատարը քաջալերեց, փայտայեց նոցա և արձակեց գնալ ու գաղթելու պատրաստութիւն տեսնել:

Սակայն անագորոյն ձմեռը և գուցէ այն յոյսը, թէ Ադիրբէյջանն էլ բոլորովին կրմնայ Ռուսաց ձեռքի տակ, արգելք եղան քրիստոնեաներին հեռաւոր ճանապարհորդութեան պատրաստուելու մինչև մարտ ամիսը: Այնուհետև մի քանի արգելքներ ևս յառաջ եկան, մի կողմից Հայերը զլջացին իւրեանց սուլաճ խոստումից, միւս կողմից պարսիկներն սկսեցին համոզել նրանց յետ մնալ ևւն: Իսկ ռուսաց կառավարութիւնը վճռեց ամենատեսակ միջոցներ գործ դնել հայերի բարոյական ոգեւորութիւնը վառ և զօրացած պահպանելու:

Այս նպատակի համար Ներսէսն ուղարկեց Պարսից գաւառները Ստեփաննոս արքեպիսկոպոսին և Նիկոլայոս վարդապետին, իսկ Պասկեհիը կոչելով Պետերբուրգից գնդապետ Լազարեանին յանձնեց նորան գնալ և գաղթականութեան գործը յառաջ տանել և ղեկավարել:

Գնդապետ Լազարեանն այն նշանաւոր տոհմի զաւակն էր, որոնք յայտնի են Մոսկուայում արևելեան լեզուաց ճեմարանի հիմնարկութեամբը և որոնք ի վաղուց անտի բնակվելով Ռուսաստանում՝ կառուցել են մայրաքաղաքների հայ եկեղեցիքը և շարունակ անխնայ օգնութիւն են հասցրել իւրեանց հայրենակիցներին:

Այս տան հարստութեան պատմութիւնը ամուր կտպուած է Ռուսաց կայսերական թագը զարդարող մի թանկագին գոհարի հետ: Այդ անդամանդը, որ Շահ-Նադիրին էր պատկանում, բերել է Լազարեան տոհմի անդամներից մէկը:

Պարսկական լծից բուռն Հայաստանի ազատութիւնը չէր կարող արձագանք չըտալ և պարսից աշխարհում բնակուած հայերի սրտերում, չէր կարող չըզարթնացնել նոցա մէջ հայրեն-

Շահի սպանուելուց յետոյ՝ այդ թանկագին քարը ձեռք է ձեռք անցնելով՝ ընկաւ վերջը Պետերբուրգում բնակուող Շաֆրաղ անունով մի հայի ձեռք։ Լազարեանը յանձն կառնու այդ գոհարը Կոմս Օրլովի համար գնել տալու։ գոհարը գնուեցաւ 40000 մանէթի։

Օրլովը՝ զատիկ առաջին օրը՝ կարմիր ձուկի ձեռով շինուած մի տիկ մէջ այդ գոհարը նուիրեց Եկատարինէ Կայսրուհւոյն։

Այն անդամանդն իւր մեծութեամբը, փայլովը, տաշուածքովն և ջրովը մի հազուադիւտ բան է. ճանաչողները գնահատում են մի քանի միլիօն։

Եկատարինէն հրամայեց զարդարել նորանով Կայսերական գայիսոնը։

Եւ ահա այս տան ներկայացուցիչներից մէկն այժմ եկաւ Հայաստան՝ իւր ազգեցութիւնովը Հայոց գաղթականութեան գործը հեշտացնելու։

Լազարեանն անձամբ շրջեցաւ Մարաղայ, Սալմաստ և Որմի, իսկ մի քանի դուս սպաներ անցկացան մինչև Քրդստանի խորքերը, ուր կային նոյնպէս հայեր, թէև սակաւաթիւ։ Եւ գաղթականութեան գործը սկզբումը շատ յաջող էր գնում։

Ճանապարհից Լազարեանը գրում է Պասկեիչին, որ Հայերը յայտնում են իւրեանց սրտալիր ցանկութիւնը յաւիտեանս դուսաց հպատակութեան ներքոյ մնալու և թէպէտ մարդուս համար դժուար է բաժանուիլ իւր ծննդավայրից, բայց նոքա պատրաստ են թողուլ իւրեանց տներն և գնալ ուր որ կըհրամայեն։

« Զեղ է վիճակուած վայելելու հայ ազգի վերականգման փառքը, գրում է Լազարեանը Պասկեիչին, այն ազգի՝ որ տածելով իւր մէջ մի հաւատ դէպի մեր տունը, երաշխաւորել է ինձ յայտնել իւր զգացմունքը Զեր բարձր գերազանցութեանը։

Եւ արդարև, գեռ հազիւ թէ իմացուել էր, որ դուսները կարճ միջոցից յետոյ հեռանալու են Ադրբէյջանից, Հայերը պատրաստուեցան ճանապարհ ընկնելու։

Թէ ինքը Լազարեանը և թէ շատերը սկզբումը կարծում էին, թէ գաղթականութեան գործը մեծ դժուարութիւնների չէ հանդիպելու, մանաւանդ որ իրենք հայերն էին խնդրում, բայց գործնականապէս մեծ արգելքներ յառաջ եկան։

Երբ գաղթականները վերջնականապէս հրաժեշտ պէտք է տան իւրեանց տներին, իւրեանց նախնիքների շիրիմներին, այն աշխատասէր նախնիքների՝ որոնք դառն քրտինքով թողել էին իւրեանց համար գեղեցիկ պողատու դաշտեր, երբ ինպառ պէտք է բարձի թողի անէին իւրեանց երկար տարիներով շինած գործարաններն և նոյա եկամուտները, երբ ներկայի հաստատ հացի կտորը պէտք է փոխէին մի անյայտ և մութն ապագայի հետ։

Անվտանգութեան օրինակ ցոյց սուռողները առաջինը նեստորականներն եղան։ Մինչ նոքա կարծում էին, թէ ամբողջ Ագիթեղանը մնալու է ռուսներին, նոքա սուղում էին Պտօկէի չի ոտքի տակին, բայց երբ անձնագրահանութիւն անելու ժամը հասաւ, նոքա այնպիսի պահանջներ յայտնեցին, որ մերժելը խոհեմութիւն էր։

Եւ նեստորականները որոնք, ինչպէս Լազարեանն ասում էր, ձեռքերը ռուսներին էին մեկնել, իսկ սրտով պարսիկներին էին անձնատուր, մերժումն ստացան։

Բայց և այնպէս նեստորականների օրինակին հետևեցան և բնիկ հայերը։

Արդարութիւնը պահանջումէ ասել, որ գտնուեցան քանի մի եպիսկոպոսներ, զոր օրինակ Սալմաստի Իսրայէլ եպիսկոպոսը, որոնք ի հաճոյս Պարսիկների մոռանալով իւրեանց քրիստոնէական պարտականութիւնը՝ գաղտնի խուսիլութիւններով և յայտնի սպառնալիքներով, ինչպէս վկայումէ ներսէոր, արգելք էին լինում հայերի գաղթականութեանը։

Պէտքէ խոստովանել, որ ռուսների կողմից գաղթականներին առաջարկած պայմանները, արդարև, ծանր էին և չէին կարող կասկած և երկմտութիւն չը յարուցանել։

Հայոց ունեցած ամբողջ կարողութիւնն էին իւրեանց անշարժ կալուածքները, աները, պողատու այգիք և արգաւանդ դաշտերն, և նոքա այս ամենը երեսի վերայ ձգելու և հեռանալու էին, բնական էր ուրեմն, որ նոքա պահանջէին ռուսատանից, որ իւրեանց բարձի թողի արածների արժողութեան գէթ երորդ մասն վերագարձնէին իւրեանց։

Թէպէտ և թուրքմանչայի դաշնադրութիւնը հայերին իրաւունք էր տալիս ծախել իւրեանց սեպհականութիւնները մահմետականներին, բայց գործով այդ անկատար մնաց, ըստ ո-

րում Պարսից կառավարութիւնը խստիւ արգելել էր իւր հր-
պատակներին ոչինչ առաւտրական յարաբերութիւն չունենալ
հայերի հետ: որպէս զի այդպիսով վերջիններին հարկադրէր
կամ մնալ իւրեանց հպատակութեան ներքոյ և կամ զրկուել
կայք ու կալուածքից:

Նոյն ինքն Լազարեանը ճշդապէս կատարելով Պասկեիչի հրա-
մանը, չէր աշխատում այնու ամենայնիւ շողոքորթել հայերին
անիրազործելի յոյսերով: Նա ուղիղ ասում էր նոցա, թէ ինչ
որ իւրեանք Պարսկաստանումը թողնում են, չեն կարող գրա-
նել Երասխի միւս ափին. թէ ամենամեծ օգնութիւնը, որ կա-
րելի է տալ մէն մի գերդաստանի հինգ արծաթ մանէթից աւելի
չի լինիլ, բայց թէ նոքա կարող են վտտահ լինիլ, որ թէ իրենք
և թէ իւրեանց սերունդը անդորրութիւն կը վայելեն իւրեանց
հաւատակից պետութեան հովանաւորութեան ներքոյ:

Նւ արւարեւ, իբրև սկզբնական օգնութիւն, գաղթականնե-
րին որոշուեցաւ միմիայն 50000 մանէթ և հայերի միակ յոյսն
այն խոտուումն էր, որով նոքա մի քանի տարի պէտք է ազատ
լինէին հարկերից և տուրքերից:

Բայց զրկուելով տուն ու տեղից տարուան այն ժամանակը,
երբ տնային ամեն պաշարներն սկսում են սպառուել, և ստա-
նալով գերդաստանագլուխ 6-7 մանէթ միայն, Հայերը պէտք
եղած հացն էլ չը կարողացան գնել. իսկ նոքա, որոնք փոքր ի
շատէ պաշար ունէին իւրեանց համար, նոքա ևս վերցնելու
հնարաւորութիւն չունէին, թէ ճանապարհն էր հեռի և թէ
անասուն գնել անհնար էր. մի ամենահաստարակ էլը արժում
էր 12—15 մանէթ արծաթ:

Պարսկական կառավարութիւնը կորցնելով ցաւօք սրտի բազ-
մաթիւ աշխատասէր հպատակներ, իւր կողմից ամենտաեսակ
գժուարութիւններ էր ստեղծում Լազարեանի գործը խան-
գարելու համար: Պարսկական գործակալներն ամենուրեք
սփռուած՝ հայերին հասկացնում էին, թէ ռուսաստան մտնե-
լուն պէս իւրեանց պէտք է տորուկներ անեն և զինուոր առ-
նեն, իսկ Պարսկաստանն, ընդհակառակը, ազատ կը կացուցա-
նէ իրենց հարկերից և մեծամեծ արտօնութիւններ կը շնորհէ:

Իւրեանց ասածներին իբրև ապացոյց, նոքա այժմէն իսկ ա-
ւելի փող էին առաջարկում հայերին, քան թէ որքան Լազա-

րեանն էր տալիս, Բայց երբ և այս չազդեց, Պարսից կառավարութիւնը հետեւեալ միջոցը ձեռք առաւ: Նոքա հրատարակեցին, թէ ռուսները բռնութիւնով են Հայերին գաղթեցնում և գորանով խախտում Թուրքմանչայի դաշնագրութիւնը:

Այս մտքով Աբբաս միրզան մի յանդիմանական թուղթ գրեց Լալարեանին, թէ ինքը բռնի կերպիւ է ուզում հայերին տանել և խնդրեց որ նա իրեն յարգող և համակրող ժողովրդի մտքերի վերայ ի շարն չբռնի Կնէ իւր ազդեցութիւնը, «Եթէ խղճիւ գատեմք, գրում է իւր նամակի մէջ Աբբաս Միրզան, ի՛նչպէս է կարելի, որ քանի մի հազար ընտանիք ինքնայօժար սրտիւ երեսի վերայ վայր ձգի իւր հազարամեայ հայրենիքը, իւր կալուածքը, այգիները, դաշտ ու տափը, որպէս զի վերջը գնայ և մնայ առանց մի կտոր տեղի և ընչի:

Հայոց շահերի պաշտպանութեան պատրուակաւ Թաւրիզից ուղարկուեցաւ անգամ անգլիական պետականութեան անգամ կապիտան Վիլլօկը:

Լազարեանն ստիպեց նորան գնալ իւր հետ միասին գաղթականների կայարանները և առաջարկեց նորան անձամբ հարց ու փորձ անել: Եւ երբ հայերը պատասխանեցին, թէ «ինքեանք գերագաս են համարում ուսել ռուսի խոտը, քան պարսից հացը», Լազարեանը պահանջեց Վիլլօկից գրաւոր վկայագիր տալ իրեն:

Գաղթականութեան ամենանշանաւոր արգելքներից մէկն էլ համարելու է մահմետականների ատելութիւնը: Նոքա հայհոյանքներ էին թափում գաղթականների գլխին և շատ տեղ քարահալած էին անում: Մինչև անգամ արիւնհեղութեան երկիւղ էլ կար, մանաւանդ որ պարսից կառավարութիւնը ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում թուրքերի տուած աքնջանքների վերայ, յուսալով, որ այդպիսով, Հայերը կը վախենան և պարսկաստանում կը մնան:

Մի առանձին թշնամութիւն էր նկատուում Քրդաստանում, որտեղից յաջողուեց մի քանի գերբաստան միայն գաղթեցնել, այն էլ՝ ամենամեծ գոթաւարութիւններով:

Այն տեղի Հայերի ցաք ու ցրիւ ընկած բնակարանները շինուած էին խորդ ու բուրդ և բարձրաբերձ ուրերի մէջ, իսկ գուրսի աշխարհի հետ կապուած էին անդեմախոր ձորերի նեղ

շաւիղներով և օձապտոյտ անցքերով. իսկ նոցա շրջակայքը մահճետականաց գիւղեր էին որոնք անուամբմիայն ստորագրեալ էին պարտիկներին:

Արժան է զարմանալ այն սպաների անձնագոհութեան վերայ, որոնք երկու երեք դազախների ուղեկցութիւնով մտնում էին այն գառազիղները, ուր իւրաքանչիւր ժայռ, իւրաքանչիւր գարեւանգ և խոր ձոր ամէն մի րոպէ մահ ու կապանք էր նոցա սպառնում:

Կատալի գազան կտրուած քրդերն՝ օրով ցորեկով յարձակուում էին սահաւաթիւ հայ գաղթականների վերայ, յափը շտակում, սպանում և կամ յետ էին մղում նոցա:

Լազարեանն ստիպուեցաւ օգնութիւն խնդրել գեներալ Պանկրատեից, և միայն Ուրմիայից եկած զօրքն էր, որ կարող եղաւ ցրուել այն հրոսակների խմբերը:

Յոյց, ի հարկէ, այս ամենայն արգելքները չըկարողացան մի անգամ սկսած գործը խանգարել և հայ ժողովուրդը մաս մաս ուռտաց զօրքի հետ միասին հեռացաւ պարսկաստանից:

Ամենամեծ և առաջին բաժինը ճանապարհ ընկաւ 1828 թուի, մարտի 16ին:

Արեւելեան ամենաշքեղ գարուն էր, ամենայն կողմից՝ Հաղիբէյշանի լեռների զառիվայրներից յառաջ էին շարժուում գէպի Երասխ գաղթականների բազմաթիւ կարաւանները:

Սրտաշարժ էր, պատմում է Գլինկան, տեսնել, թէ ինչպէս մայրերը սովորցնում էին իւրեանց մանուկներին արտասանել Հայոց առաջին թագաւոր Նիկողայոսի անունը, ի՞նչպէս նոքա ներշնչում էին զաւակներին չմոռանալ իւրեանց մեծ ազատարարին:

Երեւելի նկարիչ Մօշկովը մի մեծ պատկեր է նկարել, ուր ներկայացնում է 40000 հայ գաղթականութիւնը գնդապետ Լ. Ե. Լազարեանի անմիջական ղեկավարութեան ներքոյ: Հեռուում երևում են Մասիսը Երասխը և Երեւանու ճանապարհի վերայ ընկած գիւղերը: Պատկերի աջակողմը ինքը Լազարեանը հրամաններ է տալիս հայ տանուտէրներին և աւագներին, նորան շրջապատել են իւր թիկնապահները անգլիական ու պարսկական ներկայացուցիչները, իսկ յետին գծի վերայ երեւում է գաղթականների ընդարձակ հստուածքը:

Սակայն և այնպէս, հէնց առաջին քայլափոխում նոր հայրե-
նիքը շատ սիրով չընդունեց իւր գաղթական զաւակներին:

Այն ինչ աւելի քան 5000 գերդաստան գաղթականներ Երաս-
խին մօտեցան, Լազարեանը Երեւանու նահանգական վարչու-
թիւնից մի լուր ստացաւ, թէ ինքը հացի պակասութեան
պատճառաւ նորեկներին կարեւոր օգնութիւնը չի կարող հասց-
նել, ուստի և խնդրում էր Լազարեանից յետ պահել նրանց
Երասխի պարսկական ափումը մինչև արտերը հնձելը:

Հայերը մնացին երկնքի տակ և մեծ նեղութիւն կրեցին: Ա-
զատ հողեր չըկային, պէտք եղաւ գաղթականների միջ մասն
ուղարկել այն տեղից Ղարաբաղ:

Ահա այսպէս գլուխ եկաւ Հայոց գաղթականութիւնը. որ
մեծ օգուտ տուեց Ռուսաստանին՝ Անդրկովկասում մի այսպի-
սի աշխատասէր և, կարելի է ասել, միակ երկրագործ ժողո-
վուրդ ձեռք բերելով:

Ընդհակառակն Ադիրբէյջանի մարդարնակութիւնը զգալի
կերպիւ պակասեց և պարսկաստանը՝ նոյն իսկ պարսկական կա-
ռավարութեան հաշուով, աւելի քան 32 միլիօն մանէթ վը-
նաս կրեց:

Ամբողջ գաղթականութեան վերայ, ինչպէս Լազարեանի հա-
շուէտութիւնից երևում է, ծախսուեցաւ միայն 14000 հոլ-
լանդական ոսկի (պաճախու) և 400 մանէթ արծաթ, իսկ այս
աննշան գումարով գաղթեց 8249 գերդաստան, որ բոլորը միա-
սին 40000 հօգուց աւելի է անում:

«Վստահանում եմ ասել, այսպէս է գրում Լազարեանը
Պասկելիչին իւր յայտարարութեան մէջ՝ տալով նորան իւր
գործառնութեանց հաշիւը, թէ դուք լցնելով ձեր ձեռք բերած
երկիրները այսպիսի մի վաճառաշահ և աշխատասէր ժողո-
վրդով, տէրութեան համար հարստութեան մի մեծ աղբիւր
բաց արիք, և որքան մեծ ծախք ևս արած լինէր գաղթականու-
թեան վերայ կառավարութիւնը, ինքը աւելորդով շահուած է:

Հինաւուրց և Մեծին Հայաստանի դաշտերի վերայ սիւսուած
ամայի անապատների տեղը, այժմ՝ կը վերականգնեն աշխատա-
սէր, վաճառաշահ և թագաւորին հաւատարիմ հպատակներով
լի հարուստ գիւղեր և, գուցէ, քաղաքներ:

Վերջերումը իրաւաբանութեան նախարարութեան մէջ 1833

Թուին մի ինգիր զարթնեցաւ հայկական նախկին դրօշներէ մասին և այդ խնդրի հետամտութիւնը յանձնուեցաւ գիտնական պրօֆեսոր Զրպետին:

Զրպետը հայոց հին մատենագրների վկայութեան համաձայն պատասխանեց, թէ Կիւրոսին ժամանակակից Տիգրանի օրով Հայոց դրօշն էր եօթնագլխեան վիշապ, վերջերում՝ Արշակունեաց հարստութեան ժամանակ վիշապը փոխուեցաւ միագլուխ արծուի: Քրիստոնէութեան մուտքործելովը հայ դրօշակներէ վերայ նկարում էր փրկչական անձեռագործ պատկերը, յետոյ դասառակի տեղ դրին գառն Աստուծոյ՝ խաչը ձեռքին: Վերջապէս Ռուբինեանների դրօշն եղաւ առիւծ: Այս բոլոր զինանշաններից միտոն առած, կամեցան Հայոց նահանգի համար մի ընդհանուր դրօշ կազմել: Բայց չը պիտեմ ինչպէս փոխուեցաւ բանը, որ դրօշի վերջնական նկարը հետևեալն եղաւ: Կապոյտ տեղի վերայ՝ մի արծաթեայ վահանի մէջ տեղումը նկարուած է Մասեաց ձիւնապատ գաղաթը՝ սպիտակ ամպերը նորան շրջապատել են, լեւան կատարին էլ նոյեան ոսկեայ տապանն է դրուած:

Դրօշի ներքին մասը երկուսի է բաժանուած. աջ կողմում, կարմիր տեղի վերայ հայոց նախկին թագաւորաց թագն է, թագն ամբողջ ոսկեայ է, արծաթեայ աստղերով և մարգարիտներով զարդարուած, իսկ թագակապը և աստառը՝ կապտագոյն են: Ձախ կողմում՝ կանաչ՝ տեղի վերայ՝ էջմիածնի վանքն է ամբողջը արծաթեայ, իսկ կաթուղիկէներն իւրեանց խաչերով ոսկեայ են:

Դրօշի վերին մասումը՝ ոսկի տեղի վերայ՝ նկարուած է գուսաց երկգլխեան սրճիւր: Նա գրկած, բռնած ուճի իւր ճանգերի մէջ վերայիշեալ Վահանը: Իսկ այս ամենի գլխին դրուած է կայսերական թագը:

Վերջերումը, երբ Հայոց նահանգը միացաւ նոր հաստատուած Երևանեան կոչուած նահանգի հետ, դրօշն էլ ուրիշ կերպ փոխուեցաւ: Մի կապտագոյն վահանի վերայ նկարուած է մի արծաթեայ ժայռ, վահանի գլուխը պտակում է մի ուռսական ոսկի խաչ, իսկ վահանի վերայ դրուած է կայսերական թագը:

Բայց ուռսաց կայսերական բուն դրօշի վերայ մնացել է մի առիւծ, որպէս Ռուբինեան վերջին հարստութեան դրօշ:

Աւելորդ չի լինիլ ասելը, թէ երեսնական թուակառններին հայերը մի ծրագիր կազմեցին՝ տեղական հայ զօրք կազմելու նպատակով որ ռուսական և բուն սեպհակոն սպաների հրամանատարութեան ներքոյ պէտք է պահպանէին սահմանները և կատարէին ներքին ծառայութիւնները:

Նոր ծրագրի մէջ ի թիւս այլոց ատուած է և այն, թէ Հայ ազգը երջանիկ կը համարի իրեն. եթէ իւր հարուստ և առաջաւոր տների զաւակներից կազմուէր մի զօրագունք (գրուծինա կամ էսկազրօն), և գտնուէր Ս. Պետրբուրգում իայն իսկ կայսեր անձնաւորութեան մօտ իբրև թիկնապահներ: Որչափ արգելքները սակաւ լինին, որքան ծառայութիւնը հեշտ՝ այնչափ էլ ցանկացողների թիւը կաւելանայ:

Երագիրն առաջարկում էր, որ մի առանձին զինուորական գպրոց (КОМУЦЪ) հաստատուի հայ սպաներ պատրաստելու՝ առանց տէրութեան գանձարանի օգնութեան, թէ այդ գպրոցում և թէ ուրիշ նմանապիտի հաստատութեանց մէջ ռուսաց լեզուի ուսումը պարտադիր լինի: Դժբաղդաբար այն ծրագրի վախճանը մեզ անյայտ է:

Հայաստանի ազատութեան երկու նշանաւոր գործիչները եղան և նորա խաղաղ կենսական ասպարիզի մէջ առաջին ղեկավարները: Սորա էին Կրասովսկին և Ներսէսը:

Երբ Երևանը նուաճեցաւ և ամբողջ նահանգը Նախիջևանի գաւառի հետ միասին միացաւ ռուսաստանին, Երևանի սարգարների հոյակապ պալատումը բնակուեցաւ գեներալ Լէյտինանով Կրասովսկին՝ Հայաստանի առաջին զինուորական նահանգապետը:

Մենք չենք ուզում ասել թէ, հազիւ նոր տիրապետած երկրումը նա իւր խաղաղ գործունէութեան ժամանակ մեծամեծ հրաշքներ գործեց, այսքանն էլ բաւական է վկայել, որ մօտ անցեալի մէջ կրած նեղութիւններից յետոյ հայերը օրհնում և փառաբանում էին Կրասովսկու անունը իւր ստորագրեալներից ոչ սակաւ, բաւական է ասել, որ Կրասովսկին ժողովրդի հետ մարդասիրաբար վարուելու պատճառաւ մեղաբրուեցաւ իբրև հայերի շահերին պաշտպան և կուսակից:

Ներսէս արքեպիսկոպոսը, որին կարելի է կոչել Հայ ազգի իսկոպան պետն և գլուխը, կարողացաւ կարճ միջոցում կատարած իւր գործութիւնները անմուռանալի կացուցանել:

Իբրև ապացոյց իւր շնորհակալեաց հաւաստեացը առ Աստուած և առ կայսրը՝ Հայաստանի ազատութեան գործը յաջող վախճան ստանալու համար, Ներսէս ուխտել էր իւր հօր գերիզմանի վերայ՝ որ Սարգարաբատումը իւր հաշուով կը շինէ մի ռուսական եկեղեցի Նիկողայոս սքանչելագործի անուանով:

Այս բարի գործին մասնակցեցին Սարգարաբատում գրանուած բոլոր քրիստոնեայ ազգաբնակութիւնները և տաճարը հիմնուեցաւ Կրասովսկու ներկայութեամբ 1ին յունվարի, 1828 թուի:

Սորանից յառաջ մի այսպիսի հանդէս էլ Երևանումը կատարուեցաւ: Ռուսների Երևան ստը դրած ժամանակը այն տեղ կար միայն մի քրիստոնէական տաճար, որ հայերին էր պատկանում: Այս մի աղքատիկ հին եկեղեցի էր Զօրավար անուանով, որ ըստ աւանդութեան իւր ստորերկրեայ խորանում ամփոփած ունի Սաւուղին մկրտող Անանիա առաքելոյ մատուցը:

Պատկերէր ցանկացաւ մշտնջենաւորել պարսկական անառիկ տարոցի առման յիշատակը մի նոր տաճար հիմնելով:

Եւ ահա, նորա միջնորդութեան համաձայն, 1582 թուին տաճիկներից հիմնած Երևանի գլխաւոր մէջիդը ոսկէ լուսնով զարդարուած, փոխուեցաւ ռուսաց եկեղեցի յանուն հովանաւոր սուրբ Աստուածածնի, (ПОКРОВЪ) ի յիշատակ Երևանի բերդի առման, որ կատարուել էր նոյն օրը:

Ներսիսի աշխատութիւնովը կայսեր անուանակոչութեան օրը տաճարն արդէն պատրաստ էր:

Այդ օրուան համար Նեվայի ավուներէց ուղարկուած էր Զանգուի ավը սրբազան սպասներ, խաչկալ, թանգազին անոթներ և սեղանի ու սկհւոյ սփռոցներ, որոնք կարել էին իւրեանց իսկական ձեռքով և նուիրել երկու օգոստափառ կայսրուհիքը՝ Մարիա Ֆեօդորովնան և Ալէքսանդրա Ֆեօդորովնան:

Տաճարի օծումը կատարուեցաւ 1827 թուի գեկտեմբերի վեցին: Հէնց այդ օրը հայոց բոլոր եկեղեցիներումը և մահմե-

տական մեջիղներու մը գոհացողակոն մաղթանք էին կատարուում՝ Երեանի նոր հրամանատարի՝ այն է ռուսաց թագաւորի համար:

Բոլոր ժողովուրդը մեծ եռանդով և սիրով ընդունեց այս գէպը, ոչ միայն հայերը, այլ նոյն իսկ պարսիկները ժողովեցին իւրեանց միջից մի նշանաւոր գումար 3000 մանէթից աւելի Երեանու նահանգում գտնուած զօրքին բաժանելու համար:

Բայց շատ շուտով, համարեա գործի սկզբումը ինչպէս Կրասնովսկու նոյնպէս և Ներսիսի գործունէութիւնները սկսեցին դադար առնել՝ Պասկեիչի հետ ունեցած թիւրիմացութիւնների պատճառաւ:

Պասկեիչը անգոհ էր Կրասնովսկուց դեռ այն օրից երբ նա ռպակոյտի (շտաբի) կառաւարից էր, նա չընեց Կրասնովսկուն Աշտարակու կոտորուածքը, Պասկեիչի թշնամութիւնը այն առտիճանի էր մեծացել գէպի Կրասնովսկին, որ նա ոչ միայն ժըլտում էր վերջինիս զինուորական և կառավարչական ընդունակութիւնները, այլ և բարդեց նորա վերայ բազմապատիկ մեղադրանքներ նոր տիրապետած երկրի վերաբերմամբ:

Պասկեիչը գանգատում էր, թէ Երեանու նահանգի եկամուտը գանձարանը չի մտնում, այն ինչ Հադրբէյլանը, աւելի վատ պայմանների տակ, հարկ է վճարում, թէ Երեանու նահանգի արքունի կալուածքի նկարագրութիւնը դեռ չի արուած և Երեանի սարգարի պարտքերը չեն ցուցակագրուած և որոշուած, թէ երկրի տեղական մուտքերը ոչ թէ ի գործ են դրուած զօրքի պիտոյքը հոգալու վերայ, այլ տրուած են Կրասնովսկու կողմից ժողովրդին ցանելու համար, մինչդեռ զօրքի պաշարը մեծ դժուարութեամբ է բերուում վրաստանից, և չն:

Պասկեիչը մեղադրում էր Կրասնովսկուն, որ նա Ներսիսին անսահման իրաւունք է տուել, որով նա մեծ ազգեցութիւն է գործում ամէն բանում և հայերին վնասուկար կերպիւ պաշտպանում է, այն ինչ ազգաբնակչութեանց երեք քառորդ մասը մահմետականներն են կազմում:

Եւ մինչև ցայսօր պատերազմական գործում Կրասնովսկու հետ չէի ծառայած, գրում է Պասկեիչը Դիբիին, այդ պատճառաւ նորան համարելով մի ընդունակ մարդ, խնդրեցի նո-

րան նշանակել շտաբի կառավարիչ: Ձեզ քաջ յայտնի է, թէ նորա ծառայութիւնը այդ կոչման մէջ որքան օգտակար եղաւ: Ես կարծում էի նոյնպէս, թէ նա կարող է մի առանձին բանակի հրամանատար լինիլ. այդ էլ ձեզ յայտնի է, թէ նորա նշանակութիւնը ինչ հետեանք ունեցաւ: Վերջապէս նա կառավարիչ նշանակուեցաւ նոր տիրապետած երկրին, որի ապագայ բոլոր կազմակերպութեան իրագործումը կախուած էր նորանից, թէ նա լուռըն անգամ գործին ինչ տեսակ ընթացք պէտք է տայ. շնորհ արէք ուրեմն տեսնել, կատարեց արդեօք Կրասովսկին իւր պարտականութիւնն այդ կոչման մէջ. և ՚հ. . . « Ես կարո՞յ եմ ուրեմն մի այդպիսի օգնական ցանկանալ ինձ համար Ես արդեօք կայսեր առաջին պատասխանատու չեմ գտնուիլ—հարց է առաջարկում վերջումը Պասկեիչը—ամենից վերջը գալիս է այն եզրակացութեանը, որ Կրասովսկին պիտանի չի կարող լինիլ: »

Դիբիչին քաջ յայտնի էր, թէ Կրասովսկին ընդ՛ու համար է շտաբի կառավարչութիւնը թողել, ուստի և, ինչպէս երևում էր, աշխատում էր մեղմացնել Պասկեիչի խիստ հայեացքները:

Թէպէտ և, ի հաճոյս Պասկեիչի, Կրասովսկին յետ կոչուեց Կովկասից և ընդհանուր զօրաբանակի մէջ հաշուեցաւ (ЗАЧИС- (ЛИЧЪ ПО АРМІИ) բայց և այնպէս պարսկական պատերազմի վերջաւորութեան համար սուրբ Աննայի Ա. աստիճանի արմասեայ շքանշան և միանուագ 100000 մանէթ դրամական վարձատրութիւն ստացաւ թագաւորից:

1828 թուի ապրիլի 28 ին Կրասովսկին դուրս գնաց Երևանից դէպի Ռուսաստան: Այնպիսի փառքով ճանապարհ դրին նորան, որ համեմատած իւր կրած անբաւականութեանց հետ նա միանգամայն միտթարուեցաւ: Մի ականատես ասում է, թէ Կրասովսկուն տուած պատիւները ոչ թէ նորա աստիճանին էին վերաբերում, այլ իւր սեպհական անձին:

Տիխիսի հայերից մի պատգամաւորութիւն շտապել էր յայտնել նորան շնորհակալութիւն՝ հայ ազգին մատուցած ծառայութեանց համար. գերեզմանի դուռը հասած ծերունի Եփրեմ կաթողիկոսը օրհնեց նորան՝ տնանկներին խնամք տանելու համար. ներսէս արքեպիսկոպոսը էջմիածնի հոգևորակա- նութեանը գլուխ կանգնած՝ բարի ճանապարհ մալթեց նորան

մի ճառախօսութիւնով, որի մէջ Կրասովսկուէն անուանում է քրիստոնէութեան թշնամիների ձեռքից Մայր Աթոռի ազատարար, իսկ նորա ստորագրեալներն ևս ամբողջ զինուորականութեան կամից մի սւղերձով ներկայացրին մի մեծ պատկեր, որի մէջ փայլում էր Կրասովսկու բոլոր քաջագործութիւնները:...

Մի քանի ամիս հազիւ էր անցել, որ Կրասովսկին հեռացել էր Կովկասից և ահա հերթը հասաւ ներսէս արքեպիսկոպոսին:

Առաջին անգամն ամէնքը գնահատում էին ներսիսի գործունէութիւնը և նորա ցոյց տուած ծտուայութիւնները: Այս բանում կաթուղիկոսի համակրութիւնը ի հարկէ մեծ գործ էր տեսնում:

Պարսկական պատերազմը վերջանալուց յետոյ թագաւորը պարգեւատրելով ծերունի Նփրեմ կաթուղիկոսին սուրբ Ալէքսանդր Նեվացու արժանաց շքանշանով (առանց զարգարանքի): մի ժամանակ էլ նոյն շքանշանը սուեց ներսիսին հետեւեալ գրութեամբ. (րեսկրիպտ):

« Ի վաղուց անտի, գրում է թագաւորը, դուք ցոյց էք տուել ռուսաստանին ձեր անձնութիւնը, նոյնը արիք մանաւանդ և ներկայ պարսկական պատերազմի ժամանակ, ուր ջերմեռանդութիւնով շարունակ մեր զօրքի հետ մասնակից լինելով անխնայ անձնատուր էիք լինում վտանգների Գնեբալ ատիւտանտ Պասկեիչը շատ անգամ է տեղեկութիւն տուել միզ ձեր գովանի քաջագործութեանց մասին, յայտնելով թէ ամբողջ պատերազմի ընթացքում դուք մեծ եռանդեամբ ծառայում էիք ռուսաստանի շահերին, նորանով, որ աշխատում էիք ձեր հանճարեղ խորհուրդներովը, յորդորներովն և անձնական օրինակովը ջերմ համակրութիւն զարթնացնել և պահպանել հայ ազգի մէջ դէպի մեր գահը: Ձեր այնչափ երևելի ծառայութիւնները փառաւոր և նշանաւոր անելու և իմ առանձին բարեհաճութիւնը ամբողջ հայ ազգին ցոյց տալու համար ես հաշորդ եմ անում Ձեզ (պարգեւատրում եմ) սուրբ Ալէքսանդր Նեվացու շքանշանին:»

Սակայն շատ չսնցաւ, Պասկեիչի յարաբերութիւնները ներսիսի հետ փոխուեցան:

Հաստատ ապացոյցներ կան, որ պնդում են, թէ յարաբերութիւնները լարուելու գլխաւոր պատճառը ներսիսի գրած մի

Թուղթն էր: Այդ նամակը նա գրել է Պասկեւիչին նորա Դէյ-կարխան եղած ժամանակը: Նամակի մէջ նա յայտնում է իւր կարծիքը Մակուայ խանութիւնը ռուսաստանին միացնելու և պարսկական նոր սահմանագծի մասին:

Ներսէսն ամենայն իրաւամբ կարծում էր, որ սահմանագիծը Նախընթացի սկսած՝ պէտք է իջնի դէպի արեւմուտք ոչ թէ նրասխի ուղղութիւնովն, ինչպէս արդէն վճռուած էր. այլ պէտք է անց կենար ուղիւ գծով լեռնաշղթաների միջով ուղղակի մինչև տաճկական սահմանը, որպէս զի պարսկաստանը մի սուր անկիւնով չըմտնէր ռուսաց երկիրը: Պասկեւիչը նորա տուած այս խորհրդիցը վիրաւորուեց և չընդունեց:

1828 թուի մարտ ամսին նոցա երկուոյ յարաբերութիւններն այնքան լարուեցան, որ Պասկեւիչը Ներսիսին հեռացրեց և չիթոյլ տուեց միանգամայն խառնուել նրեանու նահանգի կառավարչութեան գործերում, միայն Դիրիչին տեղեկութիւն տուեց, թէ ինքը ամենայն քաղաքավարութեամբ և առանց ինչ վիրաւորանքի է կատարել այս գործը.....

Այնուհետև պասկեւիչը մի քանի շարունակ յայտարարութիւններով պսեց կասկածելի ցուցանել (дискредитировать) Ներսիսին թագաւորի աչքում ասելով թէ ինչ որ նա կատարել է ռուսաստանի համար և ինչ որ իւր անցեալ կեննքի մէջ պրել է, այդ ամենը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մի շարք խառնակչութիւններ (ինտրեզներ) որ յառաջ էին եկել նորա ինքնիշխան բնաւ որութիւնից և փառասիրութիւնից:

Այս յայտարարութիւնները վերջ ի վերջոյ հասան իւրեանց նպատակին:

Եւ ահա 1828 թուականի յուլիսին Դիրիչն արդէն այսպէս է գրում Պասկեւիչին. «Ձեր պայծառափայլութեան բազմոգիւմի յայտարարութիւններից թագաւոր կայսրը նկատել է, որ Ներսէս արքեպիսկոպոսի գործողութիւնները շատ զէպքերում հակառակ են մեր կառավարութեան տեսակէտներին և օգուտներին, որին ապացոյց է հայ զինուորների տուած գանգաւոր, որոնց Ներսէսն ինքնագլուխ պարտաւորացրել էր 25 տարի ԼՂ-միւսմանումը ծառայել: Այս ամէնը տեղիք են տալիս մտածելու, թէ գուցէ Ներսէսը որ և է գաղտնի նպատակներ ունի ռուսաստանին միացրած նահանգների մասին: Ահա ինչ է պատաս-

խանութ սորան Պասկելիչը,

Ներսիսի բռնած ընթացքը ոչինչ վնասակար և հակառակորդ թիւնական մտադրութիւններ, կամ ռուսաստանի միացած երկիրների մասին որ և է գաղտնի դիտաւորութիւններ չի արտայայտում: Ընդհակառակն պարսկական պատերազմի ժամանակ Ներսէսը միշտ պատրաստականութիւն էր յայտնում մեր օգտին ծառայելու և անձնուիրութիւն էր ցոյց տալիս դէպի ռուսաստանը:

Բայց որքան և արդարացնեմ նորան այս մտտումը, ես չեմ կարող լուել և չստել, թէ նորա փառասիրութիւնը (ВЛАСТОЛЮБИЕ) շատ հեռու է տանում նորան իւր պարտականութիւնների, կոչումի և աստիճանի սահմաններից և թէ նա ոչ միայն հոգեւոր, այլ և աշխարհական գործերումն ևս ցանկանում է գործել անսահման իշխանութեամբ Վեհափառ Նիքիւմ կաթողիկոսի զառամելութիւնը և սկարութիւնը միջոց տուին նորան իւր ձեռքն առնել հայոց եկեղեցական վարչութիւնը: Նա այսքանովը չբաւականացած՝ տարածում է իւր իշխանութիւնը և աշխարհական գործերի վերայ և կամենում է ցոյց տալ իրեն ինչպէս գլուխ և կառավարիչ ամբողջ հայ ազգութեան:

Այս մասին այսքան մեծ էր նորա փառասիրութիւնը, որ նա սկսեց յուսադրական խրախուժագրիւր (ПРИВѢЩАЮЩІЯ) ուղարկել արտասահմանեան հայերին և մերձակայ տաճկական սահմանակից կառավարիչների հետ յարաբերութիւններ հաստատեց և ամէն ժամանակ ներկայացնում էր իրեն ինչպէս դրացի և Արփաչայ գետի ափունքի տիրապետ միշտ, բաժանելով իւր սեպհական օգուտները տէրութեան ընդհանուր շահերից:

Բացի գորանից շատ անգամ է Ներսէսը արտայայտել իւր միակողմանի դիտաւորութիւնները Եջմուշնի եկամուտներն աւելացնելու համար, թէ կողմ ողբա վնաս ևս պատճառէին տէրութեանը: Երևանում պատահած յայտնի անբաւականութիւնների պատճառներից մէկն էլ այն էր, որ Ներսէսը հէնց առաջին անգամից նկատեց, թէ ես որքան եմ աշխատում արքունի շահերը պաշտպանելու համար և հասկացաւ, որ ես սաստիկ դիմադրելու եմ իւր դիտաւորութիւններին, որով նա մտադիր էր հայ եկեղեցիներին սեպհականացնելու իրանց չքաւատանա՞ծ

կալուածքներն ու եկամուտները։

Իւր այս կարծիքին իբրև ապացոյց Պասկելիը հետևեալ դէպքն է յառաջ բերում։ «Դեռ նոր Կողբայ ազահանքները տրուել էին կապալով, որ Ներսէսը յայտնեց, թէ յունաց Հերակ կայսրը դեռ ևս 629 թուականին, 1200 տարի յառաջ Կողբայ երրորդ մասը նուիրել է էջմիածնի վանքին։ Ներսէսի անհանգիստ բնաւորութիւնը ((НАКЛОНИОСТЬ КЪ ИНТРИГАМЪ) բնականաբար յառաջ է եկել նորա փառասիրական ձգտումներից և հայ եկեղեցու շահերը միակողմանի կերպիւ պաշտպանելու նպատակից։

Հայոց գործերի վերաբերութեամբ Ներսիսի ունեցած տնտեսի միջեռանդը կարող է արձագանք գտնել և ուրիշ նշանաւոր հայազգիների մէջ, որոնք սկզբից հաստատ միտք ունէին և այսօր էլ նայն մտքին են հեռու պահել իւրեանց մեր օրէնքների ազդեցութիւնից և ցանկութիւն չունին ենթարկուել այն պարտականութիւններին, ինչ որ ուրիշ հպատակները կատարում են։ Ասածներիս անհերքելի ապացոյց են հիւսիսային Կովկասում բնակեցրած հայերը, որոնք մինչև ցայսօր ոչ միայն խոյս են տալիս բոլոր պարտականարութիւններից, հիմնուելով Պետրոս առաջինի տուած արտօնութիւնների վերայ, այլ և աշխատում են ի վնաս արքունի գանձարանի իւրեանց իրաւունքը տարածել և այն նոր տոււն ընկած հայերի վերայ, որոնց վերայ այս իրաւունքները չեն տարածուում։ Մի և նոյն ձգտումն էլ սպասելու է Անդրկովկասեան հայերից։

«Ինչ վերաբերում է Ներսիսին, աւելացնում է Պասկելիը, ես մեծ դժուարութեան մէջ եմ։ Քաղաքականութիւնն ինձ արգելում է բոլորովին հեռացնել նորան գործերից, բայց եթէ թողնենք նորան իւր ազդեցութեան մէջ, վանքական պահանջներն անվերջ կըլինին և գանձարանը կըզրկուի բոլոր այն արդիւնքներիցը, որ կարող էր ունենալ։»

Թագաւորը վճռեց յետ կոչել Ներսէսին։ Այս իսկ միջոցումը մեռաւ Բեստարաբիայի և նորա սահմանակից նահանգների հայոց Գրիգոր արքեպիսկոպոսը։ Ներսէսը նշանակուեցաւ նորա տեղ։ Յունիսի չորսին նա արդէն դուրս ելաւ էջմիածնից գնալ իւր նոր պաշտօնատեղին՝ Քիշնէ։

Ներսիսի հեռանալը խորին տխրութեան մէջ դրեց հայերին

և Եփրեմ կաթողիկոսին:

1828 թուի, Հոկտեմբերի 8ին Եփրեմը մի նամակ է գրում թագաւորին, որի մէջ մի առ մի յիշում է Ներսիսի ծառայութիւնները, ստում է որ ինքն անձամբ պարտական է այնպիսի արժանաւոր արքեպիսկոպոսին և ինդրում է վերադարձնել նորան Երմիածին, որպէս զի իւր կենդանութեան ժամանակ յանձնէ նորան կաթողիկոսական վարչութեան ղեկը:

Շատ հասկանալի է, թէ ինչ տհաճութեամբ յանձն առաւ Պասկէ իչն այս միջնորդութիւնը:

Օտար գաւանութիւնների հոգւոր գործերի գլխաւոր կառավարիչ Բլուզովին նա գրեց, որպէս թէ ծերունի կաթողիկոսի մտաւոր զօրութիւնը պակասել է, թէ ո՞ր աստիճանի է հասնում Ներսիսի համախոհների յանդգնութիւնը և վերջումն ասաց, թէ ռուսաստանի շահերը և երկրի խաղաղութիւնը պահանջում են չթոյլ տալ Ներսիսին լինել ամենայն Հայոց ծայրագոյն կաթողիկոս:

Իւր կողմից Ներսէսը հասկանալով, որ Բեսարաբիայի վիճակը մի քաղաքավարի պատրուակ է Հայաստանի գործերից իրան պատճառով հեռացնելու համար, ինքն աշխատում է արգարացնել իրեն Բլուզովի աչքումը և 1829 թուի, յունվարի 21ին հետեւեալ նամակն է գրում նորան:

« 28 շարունակ տարի անսահման եռանդեամբ և անկեղծ հաւատարմութեամբ իմ անիռնջ հսգատարութիւնները և անխնայ աշխատութիւնները լարել եմ ռուսաստանի օգտի և իմ համասեռ ազգիս բարեկենդանութեան համար: Ճակատագիրը տնօրինել էր ինձ իշխան Յիցիանովի օրից ամենուրեք գտնուիլ պատերազմների մէջ և ամէն բանի մէջ ռուսներին գործակից լինիլ: Այս քաղցր պարտականութիւնները կատարելով իմ աշխատութիւնների, հսգատարութիւնների և անձնազոհութիւնների փոխարէն ես շահուեցայ ռուսաց կայսրների, գլխաւոր հրամանատարների, իմ ազգի և նորա վեհափառ գլխի երախտագիտութիւնը: Վերջապէս պարսկական պատերազմի ժամանակ շատ զէպքերում եմ գործակից գտնուել Պասկէիչին, մանուսաղ Սարգարաբազն և Երևանն առնելուս: »

« Կոմս. Պասկէիչը, շարունակում է Ներսէսը, անբաւական էր մնում միշտ այն գլխաւոր գեներալներէից, որոնց հետ ես

զանազան գործերով յարաբերութիւններ էի անում, փոխանակ երախտադէիտական հաւատեաց՝ կասկածանքներ ծնան նորա մէջ իմ դէմ, իսկ այդ կասկածները յաւիտեանս երկպառակութիւն ձգեցին մեր մէջ: Իսկ Պասկեիչի մի անցեալ սխալը, որ արեց նա պարսկաստանի հետ արած դաշնագրութեան ժամանակ մի նշանաւոր կէտի մէջ՝ ռուսաստանի սահմանագծի վերաբերութեամբ, կատարեց արդէն իմ դէմ Պասկեիչի պարզ ահաճութիւնը:

Ներսիսի գրութեանը Պասկեիչը այսպիսի մանրամասն բացատրութիւններ էր աւելի, «Ներսէս արք եպիսկոպոսը, գրումէնա, ասելով որ մեր մէջ ծագած մեծ անբուականութիւնների շարժառիթը, որպէս թէ գլխաւոր գեներալների հետ իւր ունեցած յարաբերութիւններն էին, դորանով ինքը հաստատումէ, որ մասնակից է եղել իմ դէմ եղած խռովութիւններին (ինտրիգներին), որոնք անյայտ չեն թագաւոր կայսրին»:

«Պէտք է կարծել, շարունակում է նա, որ Ներսէսը յիշելով իմ իբրև թէ սահմանագծի վերաբերութեամբ գործած սխալներն, դորանով հասկացնում է իւր այն ծիծաղելի առաջարկութեան համար, որ ես չընդունեցի՝ այն է Մակուայ խանութիւնը մեր նահանգներին չըմխոցրի: Ահա ինչպէս պատահեցաւ: Դէ-կարխանում եղած ժամանակս, իզարմանս իմ, ստանում եմ գեներալ Կրասովսկու մի յայտարարութիւնը, որով գրում է թէ ինքը լսել է, որ Մակուայ խանութիւնը վերադարձնուում է Պարսկաստանին և թէ այս խնդրի վերաբերութեամբ ինքը ստացել է Ներսիսից մի հաղորդագրութիւն և ուղարկում է ի բարեհայեցողութիւն իմ: Եթէ գեներալ Կրասովսկին պաշտօնական յայտարարութիւն չը գրած լինէր, ես նորա գրութիւնը կընդունէի իբրև մի կատակ, որովհետև դժուար էր երևակայել թէ մի գեներալ լէյտինանտ, մի արք եպիսկոպոսի հետ միասին մտածէին ինչ խորհուրդներ աալ, թէ ի՞նչպիսի դաշն կուպեմ ես, այն ինչ այդ մասին ես լիակատար իրաւունք եմ ստացել թագաւոր կայսրից: Ուստի և ես չը կամենալով թոյլ տալ իմ իշխանութեան ներքոյ որ և է հանրապետական օրէնքներ, յանդիմանութիւն գրեցի գեներալ Կրասովսկուն իրեն չը վերաբերեալ գործերում խառնուելու մասին: Ներսիսի առաջարկութեան մասին՝ Մակուայ խանութիւնը մեր գաւառներին միա-

ցնելու առթիւ՝ ես հետեւեալն եմ ասում :

1) Թէ առանց Մակուայ խանութեան էլ Պարսկաստանի հետ իմ կապած խաղաղութեան դաշինքը բաւականին օգտուէտ է մեր համար :

2) Մակուայ խանութիւնը միաւորելով՝ մենք կունենայինք մի անորոշ օաճման և

3) Մակուայ խանութեան ձեռք բերելը նորա համար էր ցանկալի ներսիսին, որ այն տեղ կայ մի հայկական հարուստ վանք :

Զէ կարելի ասել, որ Պասկե-իչի յառաջ բերած պատճառները համոզական լինէին : Գոնէ նորա բացատրութիւնները իբրև թէ առանց այն էլ իւր կապած պայմանը օգտուէտ էր, թէ այն տեղ մի հարուստ վանք կար, (որ ի հարկէ ցանկալի էր) որ մեր ձեռքն անցնէր) նորա յիշած ինտրիգներն ևլն, այս բոլոր փաստերը բնաւ ոչինչ չեն հաստատում և ոչինչ էլ չեն հերքում :

Բայց և այնպէս եփրեմ Կաթուղիկոսի միջնորդութեանը ներսիսին էջմիածին փոխադրելու մասին մնաց առանց ուշադրութեան : Սակայն ճակատագրի կամքն էր, որ ներսէսը վերագառնար Հայաստան կաթուղիկոս և իւր երկոտասանամեայ գործունէութիւնովը՝ ապացուցանէր իւր խորին անձնութեանը բուսաստանի անկեղծ շահերին : Սորանով նա գլխաւորապէս պարտական էր այն ժամանակուայ Պետական անձներին մէկին՝ այն է իշխան Վ. օրոնցովին, որ Նոյորոսիսկում գեներալ գուբերնատոր եղած ժամանակ կարողացաւ մօտ ճանաչել, ներսիսին և միանգամայն արդարացրեց նորան թագաւորի աչքում :

Եփրեմի մահից յետոյ 1831 թուին, երբ Պասկե-իչն դեռ Կովկասումն էր, կաթուղիկոսական գահը բարձրացաւ Յովհաննէսը : Բայց 1842 թուին, երբ նա ևս մեռաւ, ներսէսը միաձայն ընտրուեցաւ կաթուղիկոս, այն ինչ միւս կանգի-դատը՝ Երուսաղէմի Զաքարիա պատրիարքը 26 ձայնից միայն 17 ստացաւ : Երկու կանգիգաւորներն ևս առաջարկուեցան թագաւորին հաստատութեան : Կայսրը հաստատեց ներսիսին՝ «ինչպէս մի անձնաւորութիւն, որին մատնացոյց արին միաձայն և միահոգի թէ ներկայ և թէ բացակայ ընտրող պատգամաւորները» :

Սակայն ներսէսը նշանակուելով ծայրագոյն կաթուղիկոս,

կարող եղաւ 1845 թուի Դեկտեմբերին՝ հաղիւ հասնել Տփլիս։ Երկու ամբողջ տարի ծանր հիւանդութեան պատճառաւ ստիպուեցաւ նա մնալ պետերբուրգում։

Անմահանալի է մնացել Տփլիսի համար Հայերի իւրեանց նորընտիր կաթողիկոսին դիմաւորելը։ Դեկտեմբերի 17 ին առաւօտեան կայծակի արագութեամբ լուր տարածուեցաւ, թէ կաթողիկոսը Տփլիսից 70 ասպարէզ հեռու գիշերելու է Անանուրումը։ Մի վայրկենում խանութները փակուեցան, սուն ու տեղ երեսի վերայ թողուեցան և ամէն մարդ, ով կարողացաւ, շտապեց Վեհափառ Հայրապետին դիմաւորելու։ Ամբողջ տարածութիւնը սկսած վանքի մայր եկեղեցուց, բոլոր քաղաքը՝ մինչև Դեղումի դաշտը և գեռ աւելի հեռու՝ մինչև Մցխէթ, 20 ասպարիզից աւելի՝ լցուած էր խուռն բազմութեամբ։ Այն փողոցները ուր անցնելու էր կաթողիկոսը տներ լուսամուտներ, պատշգամբներ և կտուրներ բոլորը բռնած էին բազմութեամբ, ամէնքի երեսին փայլում էր մի քաղցր ուրախութիւն և սրտատրոփ անհամբերութիւն։

Դեկտեմբերի 18-ին կէսօրին Ներսէսն եկաւ Վէրայ՝ Տփլիսի մի արուարձանը, այն տեղից սկսաւ նորա հրաշափառ մուտքը դէպի քաղաք։ Նախնաւանդ սովորութեան համաձայն ամէնքից յառաջ գնում էր ձիապանը, որի ետեւից քաշում էին երկու ոսկեծոփ ծածկոցներով զարդարուած ձիանք։ Այս մի ծէս է, որ, կարծեմ, մնացել է հին ժամանակից, երբ Տաճկաց սուլթաններն ու պարսից շահերը Եջմիածնի կաթողիկոսներին գահակալութեան ժամանակ սովոր էին ընծայ ուղարկել նորանց։ Ձիապանից յետոյ գնում էին շաթիրները թօփուղներով, նոցանից յետոյ գնում էր կաթողիկոսական կառքը, որի առաջից երկու վարդապետ ձի հեծած գնում էին ձեռքներին բռնած՝ մէկը՝ կաթողիկոսական գաւազանը և միւսը խաչը։ Ալէքսանդրեան հրապարակի վերայ կաթողիկոսին դիմաւորեց ամբողջ հոգեւորականութիւնը։ Հայրապետը կառքից դուրս եկաւ, մտաւ ամպհոյսանու տակ և հանդէսը Տփլիսի բոլոր եկեղեցիներին զանգահարութեամբը յառաջ գնաց և մտաւ մայր եկեղեցին։

Ժողովրդի հրճուանքին չափ չըկար։

Ներսիսի անուան հետ անբաժան կապուած է այն յիշողութիւնը, այն դէպքը, երբ նա ռուս զօրքի հետ ոտք դրեց Հա-

յաստան՝ նորան ազրտեղու համար: Այժմ՝ ևս նորա վերագործը և նորան դիմաւորելը հայի ազատութեան նոր և փառաւոր գէպքերից մէկն էր:

Թարգմ. Ռուսերէնից.

Պ. Պ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Շարունակութիւն).

Ա. Ե.

Այստանի քիւր. Արեւելոյ լանտի զանգակապատնը և էկէղեցիները. Նորանց արշաւագրութիւնները. Շրջակայ յիշատակարանները. Վանտի պատմութիւնը. Եկէղեցիներէ անտանները. Եկէղեցապատնիւն իսլաւացիները. Այստանայտնան Բնակիչները. Նորանց կայարանները, Բնասորութիւնը և սփռագործութիւնները. Գիւլիտու գաղտը. Սէյր Նալաֆալի. Կարակայա. Զանի և Կարտուլանք քիւրերը. Վերջինի հնարութիւնները:

Գետակի երկու ափերը ևս, լայն տարածութեամբ զարդարուած են տանձի, սալորի, խնձորի և այլ պտուղների ծառերով, որոնք այժմ կիսով չափ վայրենացած են, բայց ցոյց են տալի որ երբեմն այդ թեք թեք դաշտի վերայ եղած են այգիներ: Ծառերի տակ, ջրերի առատութիւնից, առատ են և ծաղկաւոր բոյսերը: Որքան խոտաւէտ, ծաղկափթիթ և ծառազարդ է ձորը, այնքան վայրենի, մերկ, չոր և ամայի են ձորը կազմող ժայռոտ բարձրութիւնների գագաթները, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ կապտագոյն, դիւրափշուր աւազաքար: Երեք—չորս վերստաչափ անցած մենք վերջապէս հասնում ենք այն կետր, ուր ձորը վերջանում է և նորան կազմող մերկ ժայռերը միմեանց կցուելով, կազմում են բաժակաձեւ հովիտ, մէջ տե-